չափազանց շոռ (աղի) հող ունի, և զուրկ է թէ վաղող և թէ բղխող ջրերից, որից հետևում է և այն կարծիքը՝ թէ ջրի պակասութեան առթիւ աւերուել է այդ պատուական և մարդաշատ աւանը։ Դորա միջից մի ժամանակ հոսելիս է եղել Խնծկոնից ուխտի փոքրիկ գետակը, որը վաղուց արդէն ընկնելով իւր բնական ճանապարհը՝ ոռոգում է Մեծ–Մավրակի դաշտերը և յագեցընում է երեք քիւրդական ամարանոցների ժողովրդեանը և անասուններին։ Կլիման չափազանց տաք է և ընասակար։

Մրէն իւր բոլոր հողերով և անգամ սրբութեան տաճարով, բնակարանների ճեացորդներով և ճարտարարուեստ խաչարձանների գեղեցիկ հիւսուածքներով, պատկանում է քիւրդ փիծաբէգի որդի Բիշար–աղին, որի մահուան պատճառով այժմ օգտվում է նորա կինը, ստանալով քիւրդ խաշնարածներից վճար, տարեկան 55 ոսկի օսմանեան լիրա (500 ռուբլի)։

ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆՑ

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Ար՝ ելկ որ մընունք պաղչան,
Ու վարդ քաղենք, ծաղկեցաւ այդին։
Պիւլպիւլն ու տուտի դումրին,
Քաղցը ձայնիւ
Եղանակեն կանանչ թըփին.
Հետ կարմիր վարդին, հետ կարմիր վարդին,
Հետ մեր սիրելեաց։

Գոյնըզգոյն ծաղկունքն եկեալ,
Ալետաբերք եղեն պըլպուլին։
Մանուշակ ու հազըրվարդ
Մատուցանեն
Կանանչ թըփին, ուրախանան
Հետ ճերմակ վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց։

Նըռնենիքըդ զուգաշար,
Մարգըրատաշար, իրիստ զարմանազան.
Համն անուշ, հոտիկն անուշ,
Քան գինուշն անուշ.
Կանանչ թըփին ուրախանան
Հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց։

digitised by A.R.A.R.@

Արտուտիկ ու կարկանչուն
Կարմիր կաքաւ, գարնան ծիծեռնակ,
Սիրամարգ ոսկի թևով,
Նախշուն թեպրով,
Կանանչ թըփին ուրախանան
Հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց։

Նորատունկ նըշդարենի,
Նախածաղիկ՝ գուշակող գարնան,
Լիմոնի, նարընջենի,
Կեռաս, ծիրան,
Կանանչ թըփին ուրախանան
Հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց։

Համբրէն ծաղկունքն ամէն,
Ժողովեցան սիրով 'ի յայդին.
Ճաչակեն զանոյշ գինին,
Ի թաւ շրջին
Կանանչ թըփին, ուրախանան
Հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց։

Մեղեղիք և շարական,
Զայնաւորակ տաղ հոմերական,
Պար առեալ եղանակեն
Փաղցրը ձայնիւ.
Կանանչ թըփին ուրախանան
Հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին,
Հետ մեր սիրելեաց։

ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ

Ծան. — Այս երգս օրինակուած է Բարիզու մէջ Ս. Ժընը. Ռեւայ մատենագարանին հայերէն ձեռագրաց մէջէն։

digitised by A,R.A.R.@